Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 21-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(27 հունվարի, 2013)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Ապրուած մեր ապավէնն ու զօրութիւնն է
եւ մեր օգնականը՝ նեղութիւնների ժամանակ»
(Սաղմ. ԽԵ. 2):

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, սիրեցյալ զորականներ ու զինվորներ,

Գոհություն Ամենազոր Աստծո, որ այսօր համայն մեր ժողովուրդը Հայաստան, Արցախ եւ ի սփյուռս աշխարհի միասնաբար տոնախմբում է Հայոց երիտասարդ եւ հաղթական բանակի 21-րդ տարեդարձը: Բանակ, որը թեպետ ստեղծվել է ոչ վաղ անցյալում, սակայն ապրել եւ հաղթանակների փայլուն պսակների է արժանացել՝ անցնելով ծանր եւ դժվարին ժամանակներով, այլեւ հայ զորականաց սուրբ եւ արդար արյան հեղումով:

Անկասկած, հաղթանակները չեն տրվում հեշտությամբ, հաղթանակները չեն լինում պատահական, հաղթանակների չեն կարող հասնել նրանք, որոնց մղած պայքարն ու նպատակն ազնիվ եւ արդար չեն, քանզի ամբարիշտները, զավթողները, բարբարոսներն ու ոճրագործները ծառայում են չարությանը եւ նրա խարդավանքներին: Յավոք, այդպիսին է մեր թշնամին, որի կուրությունն ու անմտությունը թույլ չեն տալիս նրան հասկանալու եւ ընկալելու, որ հայ ժողովուրդը արդեն երկու հազար տարի շարունակ, արժանանալով Երկնային լույսի հավատքի ճշմարտության հաղթական շնորհին, իր հույսն ու ապավինությունը հանձնել է Ամենազորին, այն Ուժականությանը, Ով անպարտելի է, Ճշմարիտ եւ Արդար, Ով Տերն է բոլոր զորությունների եւ կատարյալ հաղթական պսակը Արդարության: Ահա թե ինչու, որպես բնաբան մեր պատգամի, ընտրեցինք հատկապես Սուրբ Գրքի հետեւյալ խոսքերը. «Ապրուած մեր ապավէնն ու զօրութիւնն է եւ մեր օգնականը՝ նեղութիւնների ժամանակ» (Սաղմ. ԽԵ. 2):

Հիրավի, հայ ժողովուրդն իր պատմության ընթացքին բազում ծանր եւ անգամ ողբերգական արահետներով է անցել, բայց եւ այնպես, ամբողջն պահելով իր հոգում Քրիստոսի լույս հավատքը, որպես ազգային գիտակցության եւ ճանաչողության գրավական՝ կարողացել է վերապրել եւ վերստեղծել:

Մեր ժողովուրդն իր զորությունն ու ապավինությունը գտել է իր Տիրոջ՝ Աստծո օգնականության մեջ, այսինքն՝ ամուր, անսակարկ եւ անշահախնդիր հավատքը մշտապես եղել է մեր ներշնչումների եւ բոլոր հաղթանակների միակ եւ իրական աղբյուրը: Անկասկած, այսօր ավելի քան երբեք հայ ժողովուրդը, մասնավորաբար հայոց 21-ամյա երիտասարդ բանակը, հրամայականն ունի իր հաղթանակները կառուցելու նախեւառաջ մեր

պապենական անսուտ հավատքի հիմունքների վրա: Հավատք, որը պարտինք դարձնել մեր նշանաբանն ու կարգախոսը, ազգային գաղափարների եւ արդար սկզբունքների իրականացման ճանապարհին:

Միրելի զորականներ եւ զինվորներ, անկասկած, մարտունակ բանակ կառուցելու ճանապարհին, ամուր հավատք սերմանելու կողքին կա եւս մեկ կարեւոր հանգամանք, որն անհնար է շրջանցել: Կարգապահությունը: Կասկածից վեր է երեւակայել մի բանակ, ուր պակասում է կարգապահությունը:

Անկարգությունն ու անհնազանդությունը բոլոր տեսակի անհաջողությունների եւ մեղսագործությունների պատճառն են: Առաջին մարդիկ՝ Ադամն ու Եւան, անհնազանդ գտնվելով Աստծուն, ընկան չարի խաբեության ծուղակը եւ դուրս վտարվեցին Երանական դրախտից: Կորցրեցին իրենց ունեցվածքը, ապրելու հիասքանչ տունը, դարձան թափառական, մեղսագործ եւ չարին գործակից:

Ուստի, համաձայն քրիստոնեական վարդապետության, կարգապահությունն ու աներկբա հնազանդությունը կարեւորագույն ազդակներից են մարդկային ցեղի փրկության: Առ այդ, Հայոց բանակի առավել կարգապահությունն ու հնազանդությունը այլ բան չէ, քան Երկնային ամենազոր օրենքի շոշափելի իրականությունը մեր կյանքում, որը, վստահաբար, մշտապես լավագույնս է գնահատվելու մեր Տիրոջ կողմից, Ում հուսականությամբ հայ զինվորը խաչն իր կրծքին եւ զենքն իր ձեռքին առաջ է գնում դեպի նորանոր հաջողություններ ու հաղթանակներ:

Ամուր հավատքի եւ գիտակից կարգապահության կողքին չենք կարող չկարեւորել զորականաց եւ մարտիկների հանդուրժողականության ոգին միմյանց նկատմամբ, որը քրիստոնեական վարդապետության հիմնարար դրսեւորումներից է: Անհանդուրժողականությունը ամենավտանգավոր մեղքերից մեկն է մարդկային կյանքում:

Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոս մի առիթով հայտարարում է. «Բոլոր մեղքերը պիտի ներվեն ձեզ, բացի Սուրբ Հոգու դեմ գործած մեղքից» (հմմտ. Մատթ. ԺԲ. 31): Մենք գիտենք, որ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով ու նմանությամբ, ինչպես նաեւ Իր շունչը դրեց մարդու՝ մեր նմանի մեջ: Ուստի, ցանկացած ոտնձգություն քո եղբոր հանդեպ, ոտնձգություն է Աստծո հանդեպ, ցանկացած վիրավորանք մարդու հանդեպ, վիրավորանք է Աստծուն, ցանկացած արհամարհական վերաբերմունք՝ արհամարհանք է Երկնային Տիրոջը: Իսկ նման երեւույթները անպատժելի չեն, քանզի Տերն ասում է. «Իմն է վրեժխնդրությունը»:

Ուստի, մեր կոչն է զգուշանալ նման ո՛չ քրիստոնեական արարքներից, Աստծո համար ո՛չ հաճելի երեւույթներից, այլ ընդհակառակը, միմյանց նկատմամբ լցվել առավել հարգանքով, եղբայրական սիրով, հայրական գուրգուրանքով եւ ամենայն հավատարմությամբ: Այս առումով հորդորում ենք հայոց զինված ուժերի յուրաքանչյուր զիտակից ծառայակցի, որպեսզի լցված միաբանության ոգով, շարունակի իր արդար ու հաղթական երթը, քանզի Հայոց բանակը այն կարեւորագույն հիմնաքարն է, որի վրա պիտի խոյանա մեր ժողովրդի միասնության սրբազան տաճարը:

Հարկ է նշել, որ Քրիստոսի սուրբ առաքյալները արժանի դարձան Աստվածա-

յին մեծագույն Շնորհին՝ Սուրբ Հոգու ուժականության այն ժամանակ, երբ միաբանվեցին, ինչպես նշում է Սուրբ Գիրքը. «Եւ բոլորը միասիրտ եւ միատեղ էին» (Գործք Բ. 1): Անկասկած, շնորհքը, ուժը, հաղթանակներն ու փառավոր պսակները գալիս են միմիայն միասնականության եւ միաբան ոգեղինության արդյուքում: Ուստի, անցնելով հավատքի, կարգապահության, հանդուրժողականության եւ ի վերջո միասնականության անխորտակելի շղթայի բովով՝ կկարողանանք կերտել ամուր պետականություն ունեցող հայրենիք, անսասան Եկեղեցի, նվիրյալ քաղաքացիներ, այլեւ արիասիրտ զինվորներ:

Սիրելի զորականներ եւ զինվորներ, ինչպես գիտեք, մեր մայրենի Առաքելահաստատ Սուրբ Եկեղեցին երեկ նշեց Ս. Սարգիս զորավարի տոնը: Քրիստոսի հավատքով զինված մի զորավար, որ իր որդու հետ կյանքն ընծայեց վասն Հիսուսի ճշմարիտ հավատքի: Որքան հիանալի եւ խորհրդանշական է, որ այս տոնը համընկնում է մեր երիտասարդ բանակի 21-րդ տարեդարձի հետ: Ես վստահ եմ, որ յուրաքանչյուր հայ զինվոր մշտապես պատրաստ է ամրորեն պահելու եւ պահպանելու իր սուրբ հավատքը՝ վայրկյան իսկ չվարանելով, որպեսզի Հայոց հաղթական բանակը Երկնային Տիրոջ օգնականությամբ շարունակի արդար եւ լուսավոր երթը ի խնդիր մեր Մայր հայրենիքի սահմանների ապահովության եւ պահպանության, ի շահ մեր պապենական հզոր հավատքի ամրության, եւ հանուն Հայոց բանակի առավել հզորացման:

Աստված թող առատապես օրհնի եւ ապավեն լինի հայ ազգին, որի Եկեղեցին ու բանակը Վեհափառ Հայրապետի եւ իմաստուն սպարապետների գլխավորությամբ միակամ են ոգով այնպես, ինչպես որ Ե. դարում:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն: